Ողջի

Վարչական ղեկավար՝ Մկրտչյան Նորիկ

Հեռ 093-32-66-22

Մակերես՝ 20.3կմ^2

Բնակչություն՝ 511

voghji.shirak@mta.gov.am

Գյուղ Ամասիայի տարածաշրջանում, Ամասիայից 18կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 10կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ոխչի, Օխչի, Օղչօղլի, Օղջ, Օճագլը անվանումները:Ողջի է վերանվանվել 1991 թ-ին: Գյուղը տեղադրված է Ախուրիկ գետի հովտում, սարահարթում՝ ծովի մակարդակից 1630մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Ունի արտեզյան ջրհորներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Գյուղի շրջակայքում կան պեմզայի և ավազի հանքեր, որոնք շահագործվում են:
1886 թ-ին գյուղն ունեցել է 551, 1897 թ-ին՝ 747, 1926 թ-ին՝799, 1939 թ-ին՝ 1093, 1959 թ-ին՝ 1032, 1979 թ-ին՝ 1504 բնակիչ: 1988-1989թթ հայ-ադրբեջանական հարաբերությունների վատթարացման արդյունքում գյուղի ադրբեջանցիներն տեղափոխվել են Ադրբեջանի հանրապետություն: 1989-1990թթ գյուղում վերաբնակեցվել են Ադրբեջանից, Վրաստանի Նինոծմինդայի և Սպիտակի երկրաշարժի աղետի գոտուց տեղափոխված 1669 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 511 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 87 տնտեսություն: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 628հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 499, 114 և 337 հեկտար: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ, պտուղներ: Զբաղվում են նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Ողջի

Ինդեքս՝ 2707